



3. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՎ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԵՐԸ

Թաքավորն ու վեզիրը էլան գնացին ման գալու. գնացին մեկ քաղաք, տեհան՝ մեկ գեղեցիկ նստեր էր օթախի փանջարեն, մեկ երիտառարդ մարդ նստած էր մոտը՝ մարգրիտե շուպուխը էս օգուլուշաղի քթի խղմիցր անց էր կացրե, առեր էր ձեռքը, քաշում էր:

Ասավ.— Իրիշկե՛, վաղիր, ի՞նչքան սեր ունին, վազի՛ր, կարա՛ս ընդրան՝ դիխանց հանել:

Ասավ.— Շատ շուտով կհանեմ. ի՞նչի համար, թաքավոր:

— Տեսնենք անրախտ կըլի իր մարդիցը, էգբան որ սեր ունի: Դարձան, էկան իրանց տեղը: Վաղիրը էլավ առավոտը գնաց, գտավ մեկ պառավ, ասավ.

— Պառա՛վ, քեզ կտամ քու քաշով օսկի, գնաս էն գեղեցիկ կնոջ մոտը թե. «Թաքավորը կամենում է քեզի առնե»:

Պառավը գնաց. գեղեցիկ կինը ասավ.— Եթե թաքավորը կամենա, էս գիշերը կվերջացնեմ իմ մարգին:

Պառավը ետ դառավ դրպա վաղիրը:— Աչքդ լուս ըլի, վազի՛ր, կատարիմ քու խորհուրդը, խոսք ա տվեր, կվերջացրնե իրան մարգին էս գիշեր:

¹ Կնոջը (Մ. Բ.):

Վազիրը էկավ, հայտնեց թաքավորին.— էս գիշեր կվերջացընի էն գեղեցիկ կինը իրան մարգին:

Մուժն ընկավ, թաքավորն ասավ.— Վազի՛ր, վե՛ր կաց, զընանք տեսնենք՝ ի՞նչպես էլավ էն կնոջ բանը:

Գնացին փանջարի տակը, տեհան ի՞նչ՝ իրեք հոգի փանջարի տակը: Էգոնք էրկուսով տալտալանմիշ էլան պարիսպի տակը. տեհան ի՞նչ՝ մեկ հատ պարան փանջարից քցեցին զըպա էգ իրեք մարգին. մարդները բռնեցին պարանը, ձգեցին: Թաքավորը տեհավ, որ խոխոց է գալում, թուրը քաշեց, քցեց պարանին՝ կտրըվավ, էդ իրեքը փախան:

Ձեն տվեց վերիցը էն գեղեցիկ կնիկը.— Ինչի՞ թուլացրիք պարանը... կենդանի՞ է էդ մարդը հալա:

Վեր կացան, գնացին նեքսև, տեհան մարդը վեր ընկած՝ ուշը գնացած է:

— Ա՛յ կնիկ, էս ի՞նչ արեցիր:

— Տնավրնե՛ր, ես ձեզի ասեցի շատ քաշեք պարանը, գուր շուտ թողեցիք, կիսամեռնել է էլեր իմ մարդը, կկենդանանա, շուտով կտրե՛ք գլուխը, թող վերջանա:

Պարանը հանեցին շլինքիցը, քիչ շուր քցին էրեսին, կենդանացավ. խոսեց թաքավորին հետը, ասավ.

— էս ի՞նչ արեցիք իմ գլուխը:

— Ի՞նչ է պատահեր քեզի, որ ասում ես:

— Գլուխս կնկաս ծնկին էր. իմացամ պարանը քցին շնլիքիս, էլ չեմ իմացե ի՞նչ էլե, ի՞նչ չէլե. կարելի ա ձեր բանն ա, դուք եք իմ մոտը կանգնած:

— Ո՛չ, երիտասա՛րդ, մենք ենք քեզի ազատողը: առավոտը կանենք քո կնոջ դատաստանը,— ասեցին ու ետ դարձան, էկան իրանց դիվանը:

Առավոտը օղորկին ֆարաշները. գնացին, բերին էդ մարդն ու կնիկը. կանչեցին միրզաղապները, կնկան լավ դալտին փրթեցին:

Թաքավորը ասավ.— Վեզի՛ր, ես գնում եմ ման գալու. ես քեզի կտամ տասներհինգ օր ժամանակ, էդ տղին կտամ քեզի ամանաթ, իմ քաղաքին չես թողի մնա կինարմատ. կկոտորես բոլորն էլ, իրեք տարեկանից չարի վերջ՝ ի՞նչքան էգեղեն կա:

Թաքավորը պատվիրեց, էլավ գնաց:

Վազիրը էլավ, գնաց իրան տունը, շատ էր մտածում. հայրն ասավ.

- Ի՞նչ շատ ես մտածում, որդի՛:
- Թաքավորի զաղապը բռնե՞ր ա, հայրիկ:
- Պատճառը ի՞նչ ա:
- Մե կնոջ համար ա, ասավ. «Քաղաքին պետք է շրջողիս էգեղեն, բոլորը՝ կոտորիս», տասնըհինգ օր է տվե ընձի ժամանակ:
- էգրա համար մի՛ մտածիր, որդի, ես կտամ թաքավորի պատասխանը:

Տասնըհինգ օրը թմավ, թաքավորը էկավ, կանչեց իրան վազիրին, ասավ.

- Ընչի չի կատարիր իմ բաղձանքը:
- Հայրս ասավ. «Ես կտամ թաքավորի պատասխանը»:
- Կանչե՛ք, թող դա գրա հայրը:

Հայրը էկավ, թաքավորին գլուխ տվեց, պատասխանեց.

- Ի՞նչ ես հրամայում, թաքավոր՛:
- Ընչի չի թողեցիր՝ կատարե՞ր իմ բաղձանքը:

— Ես կտամ քու պատասխանը, թաքավոր՛. ես քառասուն տարի հարամություն արեցիմ, թաքավոր՛, իմ ընկերներես բաց թողիմ, մեղա դոչիմ իմ աստուծույն, բոլոր մեղքերիցս դարձ էկամ, գրպա տունը դալու էլամ, պատահամ մեկ երիտասարդի, աչքս ընկավ դրա հալավներին ու ձիուն. իրեք կյուրդ տվիմ դրա քամակին. ամենևին չգառավ դրպա ընձի. ձին քշեցիմ դրպա վրեն, թուրը քաշեցիմ որ դարկեի, ձեռք քցեց, ընձի բռնեց, ընձի գրեց իրան ոտի տակը՝ ձիուն վրեն. թաքավոր՛, մի սահաթ էնպես գնաց, քիչ էր մնում հուրիս դուս գար. շատ աղաչեցի, բաց թողեց: «Հուր կէրթամ, արի՛ հետս», — ասավ: Գնացինք մեկ զաղի դուռ, վեր էկավ ձիուցը, գնաց գրպա նեքսեր. ես էլ դողում եմ ձիուս վրեն: Թուրը ձեռք էլավ դուս, թուրը արունոտ, ասավ. «Մտի՛ նեքս, քեզի համար փողեր վեր կալ»: Մտամ նեքս, քառասուն հոգի մորթեր էր. տեհամ որ մեկ յանը օսկի էր, մեկ յանը արծաթ շատ թոփ էլած կա, իմ բավականությունը վե կալամ, հանեցիմ գուռը, խուրճինով քցիմ ձիուս վրեն: Ասավ. «Նստի ձին, գնա՛նք»: Թաքավոր, ես էգրա հրաշքները էգպեստեհամ: Գնացինք, հասանք մեկ գերեզմանի. «Վե՛ր կաց, բաց արա էդ գերեզմանը», ասավ: Բաց արիմ, տեհամ մեկ մարդ սպանված, ֆորած ա էստեղ, տասն օրվա սպանված: էդ էլ վեր էկավ իրան ձիուցը. պլոկվավ իրան շորերը՝ բացվավ դրա ծրծերը, ետ ընձի շատ զարմացամ: էկավ, պառկավ

գերեզմանատունը: «Ա՛յ մարդ, արի կտրի իմ դուկսը, ես առամ իմ սրտի փափագը. սպանեցիմ էն քառսուն մարդը, էնդոնք են իմ մարդի դյուշմանը»: Ասեցիմ. «Իմ ձեռները չէթա քեզի սպանեմ. պատճառը ընձի ասա, նո՛ր»: Ասավ. «Ես եմ էս մարդի կինը, մարդս սպաններ էին էն քառսուն մարդը, դու ըլլես էն վերևի աստվածը, ես ընձի կըսպանիմ, հողը տո՛ւր իմ վրեն, գնա՛. իմ ձինը, մալը քեզի ըլլի»: Տեստեն դրեց մարդի վրեն, թաքավո՛ր, սիրտը քցեց խանչալի վրեն, բերնի վրա ընկավ. իրան մարդի վրեն մեռավ. հողը տվեցիմ վրեն, ընկամ ճանապարհ, էկամ մեր տունը. էլամ քո հորը լալա: Քառասուն տարի լալայութուն եմ արե քո հորը: Թաքավո՛ր, էնպես կին էլ կար, դու ի՞նչպես պետք է կոտորեիր էդպես բյուր հազար ջանը, դու կըլլեիր մեղապարտ:

— Բոլորը ներեմ քեզի, ծերունի լալա,— ասավ թաքավորը:

